Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-265'-17.05.2022-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 117-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ մասով.

«Փոխադրողի կողմից «Ավիացիայի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված պահանջները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից մինչև վեցհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. ~~Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի~~ 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 117-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ մասով.

«Փոխադրողի կողմից «Ավիացիայի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված պահանջները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ~~հինգհարյուրապատիկի~~ չորսհարյուրապատիկից մինչև վեցհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Կ-265[1]-17.05.2022-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	«Ավիացիայի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին				
1.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի վերնագիր	Վերնագրում առաջարկվում է «լրացումներ» բառը փոխարինել «լրացում» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	***ՀՀ կառավարություն***	Հոդված 1-ին	1. «ՀՕ-81-Ն օրենքի» բառերից հետո առաջարկում ենք հանել «(այսուհետ՝ Օրենք)» բառերը: 2. «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի «Ընթացակարգերի պարզեցում» թիվ 9-ը հավելվածից (այսուհետ՝ Հավելված) բխում է, որ ոչ պատշաճ	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			փաստաթղթավորված լինելն ըստ Հավելվածի դրույթի տրամաբանության՝ իր մեջ ներառում է նաև կեղծ փաստաթուղթ ներկայացնելը: Հետևաբար՝ առաջարկում ենք «կեղծ փաստաթուղթ ներկայացնելու» դեպքը չառանձնացնել «ոչ պատշաճ կերպով ձևակերպված լինելու» դեպքերի շրջանակից: Ելնելով վերը նշվածից 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունները՝ առաջարկում ենք խմբագրել:		
3.	***ՀՀ կառավարություն***	Հոդված 2-րդ	Օրենքի 63-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Փոխադրողի պատաս- խանատվությանը, ինչպես նաև ըստ պայմանագրի՝ փոխադրող չհանդի- սացող անձի կողմից իրականացվող օդային փոխադրմանը, համատեղ փոխադրմանը և այլ հատուկ խնդիրներին վերաբերող լրացուցիչ կանոնները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրեն- քներով և Հայաստանի Հանրա- պետության միջազգային պայմա-	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն, 2-րդ հոդվածը հանվել է: Ըստ այդմ հոդվածների համարակալումը փոխվել է:	Ընդունվել է:

			նագրերով:»: Օրենքի 67-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության ավիացիոն օրենսդրության խախտում- ներն առաջացնում են պատաս- խանատվություն՝ Հայաստանի Հանրա- պետության օրենքներով սահմանված կարգով:»: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտերում բացառվում են իրավական նորմերի անհիմն կրկնությունները և ներքին հակասությունները:»: Օրենքի մեջբերված նորմերից արդեն իսկ բխում է, որ փոխադրողի համար պատասխանատվությունը սահմանվում է օրենքով, վերջինս պատաս- խանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով: Ուստի, կարծում ենք, որ		

			Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքի 63-րդ հոդվածում լրացվող 9-րդ մասի նախատեսման անհրաժեշտությունը բացակայում է:		
	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին»				
1.	***ՀՀ կառավարություն***	Հոդված 1-ին	Օրենքի նախագծի 1-ին հոդվածում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրա- պետության օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս առաջարկում ենք պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը, այն է՝ «Սահմանադրական օրենք չհանդիսա- ցող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդա- կանությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը և «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն:»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

2.	***ՀՀ կառավարություն***	Հոդված 1-ին	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրա- պետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով Օրենսգրքի 117-րդ հոդվածում լրացվող վարչական իրավախախտմամբ նախատեսվում է պատասխանատվություն սահմանել փոխադրողի կողմից համապատասխան պահանջը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար՝ առաջարկում ենք լրացվող նորմում տուգանքի միատեսակ չափ նշելու փոխարեն՝ նախատեսել նվազագույն և առավելագույն սահմանաչափեր, որպեսզի հնարավորություն լինի վարչական տույժի տեսակը կիրառել կատարված արարքին համաչափ կերպով:	Ընդունվել է:Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: